ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 6 նոյեմբերի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, իր աշխատանքն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհուրդը՝ նոր կազմով:

Տերունական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը իր շնորհակալությունը հայտնեց ԳՀԽ նախկին կազմին, ապա ներկայացրեց խորհրդի նորանշանակ անդամներին՝ մաղթելով նրանց բեղուն և արդյունավետ-+ աշխատանք՝ ի նպաստ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և բարեպաշտ ժողովրդի:

Երուսաղեմում և Թուրքիայում տիրող քաղաքական իրավիճակների պատճառով Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխատանքներին իրենց մասնակցությունը չեն կարողացել բերել խորհրդի զույգ ատենապետերը՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Թուրքիո Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, որի պատճառով նիստը ատենապետում են խորհրդի ավագագույն անդամները՝ Տ. Ջավեն արքեպս. Չինչինյանը և Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Երկօրյա նիստերի ընթացքում քննարկվեցին նոյեմբերի 8-ին Վեհափառ Հայրապետի՝ Վատիկան կատարելիք այցի, 1700-ամյա տոնակատարությունների կազմակերպման, թեմական և եկեղեցական այլ հարցեր:

* * *

Նոյեմբերի 7-ին, Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի ավարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը ԳՀԽ անդամների ուղեկցությամբ այցելեց Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Նորին Սրբությունը հոգևոր այրերի հետ աղոթք բարձրացրեց առ Աստված երանաշնորհ Հայրապետներ Վազգեն Ա-ի և Գարեգին Ա-ի հոգիների հանգստության համար, որոնց նախաձեռնությամբ ու օրհնությամբ սկիզբ առավ հայակերտ տաճարի շինարարությունը:

Երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը ունեցել է նաև իր նյութական ներդրումը համազգային այս կառույցի մեջ՝ մահվանից հետո եկեղեցու շինարարությանը իր անձնական խնայողություններից կտակելով շուրջ 750 հազար դոլար: Ծանուցելով այս մասին, Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ երանաշնորհ կաթողիկոսի այս ներդրումը առանձնակի ոգևորության ու խանդավառության առիթ է բարեպաշտ զավակների և ազգային բարերարների համար:

Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին կառուցվում է ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի: Օրեցօր լայն ծավալ ստացող շինարարությունը թույլ է տալիս հավատալու, որ եկող տարի, 1700-ամյակի տոնակատարության օրերին, եկեղեցին իր ավարտական տեսքը կունենա:

Այս օրերին Մայր Տաճարում կայացած Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը մեկ անգամ ևս անդրադարձել է հոբելյանական տոնակատարություններին ու եկեղեցու շինարարությանը:

1700-ամյակի տոնակատարության սկիզբը կազդարարվի դեկտեմբերի 31-ի գիշերը, երբ Խոր Վիրապից հանդիսավոր թափորով Ս. Գրիգոր Լուսավորչի անմար կանթեղի լույսը կբերվի Մայր Աթոռ և կբարձրացվի Իջման Ս. Սեղանի վրա, և որտեղից աշխարհասփյուռ յուրաքանչյուր հայորդի տոնական տարում իր ուխտի մոմը կվառի Ս. Տաճարում: